

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԷՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Հոգեւորականաց Տարեկան Հաւաքումարը տեղի ունեցաւ Ապրիլ 28ին, 2010 Առաջնորդարանի մէջ՝ Նախագահութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ժողովին ներկայ էին Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, հիւրաբար Թեմն այցելող Հաղբատի Վանահայր՝ Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան, Թեմէն ներս ծառայող 35 Հոգեւոր Հովիւներ եւ Քահանայութեան Թեկնածու Սարկաւազներ: Որպէս Ատենապետ ժողովը վարեց Արժ. Տ. Վարդան Աւագ Քինյ. Գասպարեան, իսկ Ատենադպիրներն էին Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան եւ Արժ. Տ. Յովլէ Քինյ. Օհանեան:

Առաւօտեան ժամը 10:00ին տեղի ունեցաւ ժամերգութիւն, որու աւարտին Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոսին պատգամը, որուն մէջ Նորին Սրբութիւնը կը գրէր. *«Փառաւոր գործերի հարուստ պատմութիւն ունի Առաքելացիների ձեռամբ հիմնուած մեր Սուրբ Եկեղեցին, որ աստուածապատուէր իր առաքելութիւնը մշտապէս իրականացրել է բացարձակ հաւատարմութեամբ առ յաւիտենական Քահանայապետը՝ Յիսուս Քրիստոս: Ուղղափառ հաւատի անխորտակ վէմի վրայ ամուր կերպով հիմնուած է մեր սրբութիւն Սրբոցը՝ Հայոց Եկեղեցին, որի յարկերը խաղաղ նաւահանգիստ են հայորդեաց հոգիների համար:*

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն քահանայութեան բարձր շնորհին էք կոչուած Դուք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին, Ով իշխանութիւն տուեց ձեզ գործելու ի մէջ մարդկան՝ շարունակելու փրկագործական աստուածային առաքելութիւնը: Պօղոս Առաքելի խօսքերով մենք «Աստուծոյ գործակից ենք» (Ա. Կորնթ. Գ. 9) եւ կոչուած ենք այս կեանքում վկայելու Քրիստոսին, ինչպէս Տէրն Ինքը պատուիրեց. (Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ... եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց» (Ղուկ. Ժ. 16):

Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց հոգեւորականներուն եւ իր պատգամին մէջ ըսաւ. *«Սիրելի հոգեւոր եղբայրներ, այս ընտանիքը որուն մաս կը կազմենք բոլորս անհրաժեշտօրէն պէտքն ունինք աղօթքով ապրուած մնալուն եւ յարատեւ պայծառակերպութեան, հոգեւոր վերածնունդի, որպէսզի մեր առաջնորդութեամբ կարողանանք մշակել մեզի վստահուած անհատին ու համայնքին կեանքը Քրիստոսի սիրով, աւետարաններէն ծառագայթող աստուածային իմաստութեամբ: Այս ծանր բայց քաղցր լուծին տակ ենք բոլորս, որպէսզի մեր բացառիկ ծառայութեամբ դառնանք պայծառակերպող հոգիներ, լուսաւորող սպասաւորներ: Մեր մտածումները հրաշալիօրէն արտայայտած է World vision-ի ներկայի նախագահը՝ Richard Stearns իր հեղինակած "The Hole in our Gospel" գիրքին մէջ: "Jesus seeks a new world order in which this whole Gospel, hallmarked by compassion justice, and proclamation of the good news, becomes a reality, first in our hearts and minds, and then in the wider world through our influence." Հետեւաբար, Քրիստոսի Աւետարանը քարոզողներս ինչքան նախանձախնդիր պիտի ըլլանք մեր հաւատքի կեանքին նկատմամբ, որպէսզի կարողանանք մեր կեանքը դարձնել Քրիստոսի Աւետարանին արտայայտիչը»:*

- Սրբազան Հայրը յատկապէս շեշտեց հետեւեալ կէտերը.
- ա- Հոգեւոր առաքելութիւնը հիմնական ուղեգիծը մեր կեանքին:
- բ- Եկեղեցական կեանքի կարգապահութիւն բոլոր մակարդակներու վրայ:
- գ- Առաջնորդարան եւ Ծուխեր սերտ համագործակցութիւնը:

Ապա տեղի ունեցան գաղափարի փոխանակութիւններ եւ կատարուեցան առաջարկութիւններ: Թեմէն ներս հոգեւոր առաքելութեան յատուկ զարկ տալու նպատակով՝ հինգ հոգեւորականներէ բաղկացած յանձնախումբ մը ուսումնասիրութիւն պիտի կատարէ եւ արդիւնքը պիտի ներկայացնէ Սրբազան Հօր:

Առաջնորդ Սրբազան Հօր խնդրանքին ընդառաջելով Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնութեան եւ շնորհաւորական գիր մը դրկած էր Արժ. Տ. Արթուն Աւագ Քինյ. Սմբատեանի Քահանայական

Չեռնադրութեան 60ամեակի, Յոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեանի Քահանայական Չեռնադրութեան 50ամեակի, Արժ. Տ. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեանի Քահանայական Չեռնադրութեան 50ամեակի, Արժ. Տ. Միքայէլ Քինյ. Կիրեղեանի ծննդեան 70ամեակի եւ Քահանայական Չեռնադրութեան 25ամեակի բարեբաստիկ առիթներով: Նորին Սրբութեան Շնորհաւորական Գիրը կարդաց Յոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Սրբազան Հայրը իւրաքանչիւրին լանջախաչ մը նուիրեց, շնորհաւորեց հոգեւորականներու անունով եւ կատարեց իր բարեմաղթութիւնները:

Հոգեւորականաց ժողովի ընթացքին յատուկ պատուի արժանացաւ Տիար Հայկ Գրիգորեան, որ երկար տարիներ տքնաջան աշխատանք տանելով Անգլերէնով հեղինակած էր ստուար հատոր մը Երուսաղէմի Հայ Պատրիարքներու կեանքին եւ ժամանակաշրջաններու մասին: Գիրքը տպուած է 2009ին եւ ձօնուած է Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, որ Երուսաղէմի Աթոռին 82րդ Հայ Պատրիարքն է: Այս գիրքը պատմական մեծ նշանակութիւն ունի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի ընդհանուր պատմութեան համար: Պրն. Գրիգորեան իր խօսքին մէջ յայտնեց, թէ նախընտրած է գիրքը Անգլերէնով գրել, որպէսզի ներկայ եւ ապագայ սերունդներ կարենան կարդալ: Սրբազան Հայրը իր շնորհաւորութիւնները յայտնեց եւ հայկական ոճով ծաղկեայ փայտեայ խաչ մը նուիրեց իրեն:

Երկրորդ նիստին սկիզբը Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի՝ Կիրակնօրեայ Վարժարաններու Ատենապետ, Տիկին Տէպի Տէրտերեան պատարի վրայ նկարներ ցոյց տալով հանգամանօրէն նկարագրեց Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին կատարած աշխատանքները՝ ճամբարի, աշխատանիստերու, որոնք տեղի ունեցան Թեմիս կարգ մը շրջաններուն մէջ «Շնորքով Շաղախուած» խորագրով եւ Սուրբ Գրային մէջբերումներ, ինչպէս նաեւ լուսաբանութիւններով սքանչելի յայտագիր մը ներկայացուց: Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդը իր ծրագրուած աշխատանքները պիտի շարունակէ Թեմէն ներս: Ան արժանացաւ Սրբազան Հօր բարձր գնահատութեան:

Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քինյ. Արովեան կարեւոր տեղեկութիւններ հաղորդեց Ամառնային ճամբարի, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան եւ «Հայ Քրիստոնէայ Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան» ծրագրի մասին եւ արժանացաւ ներկաներու գնահատութեան:

Սրբազան Հայրը խօսեցաւ «Եկեղեցական Կարգապահութեան» հարցերու շուրջ, իսկ Յոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան Սրբազան Հօր փափաքով պատրաստած էր Եկեղեցական-Ծիսական կեանքին առընչուած որոշումներու հաւաքածոյ մը, որմէ բաժնուեցաւ հոգեւորականներուն, որպէսզի իրենց թելադրութիւնները կատարեն եւ ապա վերջնական ձեւով արժանանայ տպագրութեան: Հայր Սուրբը նոյնպէս ներկայացուց Յատուկ Արարողակարգերու պատրաստութեան գրքոյկի մասին իր տեղեկագիրը: Այս հրատարակութիւնն ալ պիտի կատարուի մօտ ապագային:

Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ անդրադարձաւ Թեմիս հոգեւոր առաքելութեան, հրատարակութիւններու, եկեղեցաշինութեան, նոր քահանաներու ձեռնադրութեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի մասնակցութեան, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլի այցելութեան Սուրբ Էջմիածին, Վեհափառ Հայրապետի որոշումով մօտ ապագային նոր Թեմերու հաստատման, ինչպէս նաեւ Նորին Սրբութեան Արեւմտեան Թեմ կատարելիք այցելութեան եւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Օծման արարողութեան եւ յարակից հանդիսութիւններուն: Սրբազան Հայրը խոր ցաւով յայտնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբան Գերշ. Տ. Նշան Եպս. Թօփուգեանի կանխահաս վախճանումի մասին եւ կոչ ուղղեց հոգեւորականներուն, որպէսզի աղօթին իր հոգիի փրկութեան համար:

Սրբազան Հօր կատարած բարեմաղթութիւններով փակուեցաւ Հոգեւորականաց Տարեկան Համագումարը: Ապա կատարուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն: Յաջորդ Համագումարը Առաջնորդարանի մէջ տեղի պիտի ունենայ Օգոստոս 17ին:

ԴԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Պրոպէնք, Ապրիլ 28, 2010